ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2014 թվականի N 43 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՆՄԽԻԹԱՐ ՎԻՃԱԿԸ ՇՏԿԵԼՈՒ, ԱՅԴ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի թվով 120 (հարյուր քսան) փողոցներում ստեղծված անմխիթար վիճակը, ելնելով հարցի անհապաղ լուծման անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ պարբերություններով, 14-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ, 19-րդ հոդվածի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու Կանոնակարգի 17-րդ և 18-րդ կետերով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի փողոցների անմխիթար վիճակը շտկելու, այդ ուղղությամբ տարվելիք աշխատանքները կանոնակարգելու համար ընդունել ուղերձ՝ ուղղված <<Հայ-Ջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն, պայմանագրի կառավարիչ Պատրիկ Լորենին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____